



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

29 նոյեմբերի 2017 թվականի N 268-Ա

**ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի «բ» ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան, Եղվարդ համայնքների մի խումբ բնակիչների դիմումները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել՝ Հասմիկ Մկրտչյանին 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, Քնարիկ Սարգսյանին 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ, Թամար Առաքելյանին 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, Նատալյա Գրիգորյանին 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ և Աննա Մարգարյանին 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2017 թվականի նոյեմբերի 29  
ք. Հրազդան



Ա. ԳՈՒԼՈՅԱՆ

Դրամական օգնություն ստացողների ցուցակ



Ը/Ը	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Օգնություն
1	Հասմիկ Մկրտչյան	ք. Հրազդան, Կենտրոն, 3 շենք, 8 բնակարան	50 000	
2	Քնարիկ Սարգսյան	ք. Հրազդան, Կաթավաճոր	70 000	
3	Թամար Առաքելյան	ք. Հրազդան, Միկրոշրջան, 72 շենք, 7 բնակարան	15 000	
4	Նատալյա Գրիգորյան	ք. Եղվարդ, Նալբանդյան փողոց, 16 բնակարան	20 000	
5	Աննա Մարգարյան	ք. Եղվարդ, Երևանյան փողոց, 7 շենք, 17 բնակարան	50 000	